

Կ-464-04.02.2020-ՏՏԳԲ-011

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հունիսի 4-ի ՀՕ- 373-Ն ջրային օրենսգրքի 37.1-ին հոդվածում՝

1. 11-րդ պարբերությունը «տեղադրման» բառից հետո լրացնել «, կնքման» բառով.

2. լրացնել նոր 12-րդ և 13-րդ պարբերություններով.

«Ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատում իրականացնող հաստոցների տեղադիրքն առցանց հետևելու տեխնիկական սարքավորումները ձեռք են բերվում և տեղադրվում ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատում իրականացնող իրավաբանական կամ ֆիզիկական անձանց միջոցների հաշվին:

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատում իրականացնող հաստոցների տեղադիրքն առցանց հետևելու տեխնիկական սարքավորումներին ներկայացվող նվազագույն տեխնիկական պահանջները սահմանում է շրջակա միջավայրի նախարարը:»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կ-464-04.02.2020-ՏՏԳԲ-011/0

ՏԵՂԵԿԱՆՔ

ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ

ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2002 թվականի հունիսի 4-ի ՀՕ-373-Ն ջրային օրենսգրքի ~~(այսուհետ՝ Օրենսգիրք)~~ 37.1-ին հոդվածում՝

1. 11-րդ ~~Ֆասթ-պարբերությունը~~ «տեղադրման» բառից հետո լրացնել «, կնքման» բառով.

2. լրացնել ~~հետևյալ բովանդակությամբ~~՝ նոր 12-րդ և 13-րդ ~~Ֆասթ-պարբերություններով~~.

«Ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատում իրականացնող հաստոցների տեղադիրքն առցանց հետևելու տեխնիկական սարքավորումները ձեռք են բերվում և տեղադրվում ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատում իրականացնող իրավաբանական կամ ֆիզիկական անձանց միջոցների հաշվին:

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատում իրականացնող հաստոցների տեղադիրքն առցանց հետևելու տեխնիկական սարքավորումներին ներկայացվող նվազագույն տեխնիկական պահանջները սահմանում է շրջակա միջավայրի նախարարը:»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

## ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶՐԱՅԻՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-464-04.02.2020-ՏՏԳԲ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ կառավարություն	<p>1. Նախագծի 1-ին հոդված</p> <p>2. Նախագծի 1-ին հոդված</p> <p>3. Նախագծի 1-ին հոդված</p>	<p>1. Նախագծի 1-ին հոդվածում Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի ընդունման ամսաթվից հետո նշել վերջինիս հերթական համարը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասը:</p> <p>2. Նախագծի 1-ին հոդվածից հանել «( այսուհետ՝ Օրենսգիրք )» բառերը, քանի որ նշված օրենսգիրքը Նախագծում այլևս չի հիշատակվում:</p> <p>3. Նախագծի 1-ին հոդվածի 1-ին և 2-րդ մասերում «մաս» և «մասերով» բառերը փոխարինել համապատասխանաբար՝ «պարբերություն» և «պարբերություններով» բառերով, քանի որ Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի լրացվող 37.1-րդ հոդվածը բաղկացած է պարբերություններից և ոչ թե</p>	<p>Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:</p> <p>Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>	<p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p>

		<p>4. Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մաս</p>	<p>համարակալած մասերից՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասը:</p> <p>4. Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասից հանել «հետևյալ բովանդակությամբ» բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասը:</p>	<p>Ընդունվել է, կատարվել է համապատասխան փոփոխություն:</p>	<p>Ընդունվել է</p>
--	--	---	---	---	--------------------